ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ARMENIAN STUDIES TODAY AND DEVELOPMENT PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003

Զեկուցումների ժողովածու
Collection of papers

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էդիկ Մինասյան
Հայաստան

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությունն իր առանձնահատուկ տեղն ունի մեր բազմադարյան պետականության պատմության մեջ: Այն ոչ միայն ստեղծվեց Հայաստանի առաջին (1918-1920) և երկրորդ (1920-1991) հանրապետությունների հիմքի վրա, այլև հանդիսացավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը:

Անկախության հռչակումը և անցումը շուկայական հարաբերություններին 1990-ական թվականներին լուրջ և դժվար լուծելի խնդիրների առաջ կանգնեցրին գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններին: Հասկանալի է, որ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չկազմեց, և տնտեսապես արդարացված ու դեպի ժողովրդավարություն տանող նրա ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու չօգտագործված հնարավորությունները, ձախողումներն ու անհաջողությունները:

Հայաստանի երրորդ Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքը վերջին տասից ավելի տարիներին ունեցել է կտրուկ ելևէջներ: Սպիտակի աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ նորանկախ երկիրը ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով ընկավ տարածաշրջանի տրանսպորտային ու հաղորդակցության մյուս ուղիների բնականոն աշխատանքի խաթարման, տևական շրջափակման, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամի, արտաքին շուկային ինտեգրվելու տնտեսական քաղաքականության ուղենիշներով պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման հետևանքով առաջացած անբարենպաստ պայմանների մեջ: Սակայն հիշյալ օբյեկտիվ պատճառների հետ միասին կային նաև սուբյեկտիվ գործոններ:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Երկար սպասված անկախությունն ու տնտեսական կյանքի ազատականացումը առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Երկակի անցումը բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ (խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական հաստատությունների կայացում և այլն) ունեցավ նաև բացասական հետևանքներ, ծնելով աղքատություն և սոցիալական բևեռացում, գործազրկություն և արտագաղթ, օրինազանցություն, կոռուպցիա,

կախվածություն արտաքին ֆինանսական և տնտեսական կենտրոններից: Բնակչության դժգոհությունը և արտագաղթը հստակ վկայում են, որ քաղաքական անկախության ձեռքբերումները չեն հավասարակշռում տնտեսական ու սոցիալական կորուստները: Դեռևս նոր-նոր ձևավորվող ժողովրդավարական արժեքների անկումը կանխելու և հասարակությանը պատճառած կորուստներից խուսափելու համար կառավարությունը պետք է առաջին հերթին առաջնորդվեր սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությամբ, որը համապատասխաներ գլոբալ և ազգային առաջադիմության միտումներին: Անցած տասից ավելի տարիների ընթացքում առաջացած խնդիրները մասամբ աստիճանաբար համակարգվում և լուծվում են, սակայն այդ գործընթացը լիովին հունի մեջ դնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր գիտական ու գործնական նշանակություն ունի:

Հայաստանի անկախ Հանրապետության հռչակման շեմին հայ քաղաքական միտքը ինքնիշխան պետությունը հիմնականում պատկերացնում էր որպես ազգային ժողովրդավարական գաղափարախոսության և ներմուծված շուկայական ազատականության մեխանիկական հանրագումար: Սակայն շուտով պարզվեց, որ ազգային գաղափարախոսությունը գործնականում մշակված չէ, քաղաքական կառույցներն անկայուն են, իսկ տնտեսական վերափոխումների կտրուկ իրականացումը անչափ ծանր բեռ է շրջափակման ենթարկված և պատերազմող Հայաստանի Հանրապետության համար: Քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական ծրագրերի բացակայության սուբյեկտիվ հանգամանքներին գումարվեցին պատերազմի, շրջափակման, տնտեսական ճգնաժամի օբյեկտիվ գործոնները՝ ավելացնելով զրկանքները անցման շրջանում:

Նորանկախ պետությունը թեպետ թույլ էր քաղաքական ու տնտեսական կառույցներով, մշակված չէր համազգային գաղափարախոսություն, սակայն պետությունը պահպանելու համար օժտված էր քաղաքականապես ակտիվ և ժողովրդավարության ձգտող հասարակությամբ: Մեր կարծիքով, ի տարբերություն անցյալի, դա էր Երրորդ Հանրապետության կայացման գլխավոր գրավականը:

Ավելի քան 13 տարի է անցել անկախության հռչակման օրվանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկա մի ամբողջական ուսումնասիրություն, որտեղ քննության առնված լինեն Երրորդ Հանրապետության պատմության հիմնահարցերը, վերհանված ու վերլուծված լինեն սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական ոլորտի վերափոխումների էությունը, նշանակությունը և այդ բնագավառի զարգացման փուլերն ու առանձնահատկությունները:

Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմությունը, որը վերջին տարիներին տնտեսական աճի բարձր ցուցանիշներ է արձանագրել, հայ պատմագիտության ուսումնասիրության կարևոր բնագավառներից է: Չնայած Երրորդ Հանրապետության տնտեսական քաղաքականության առանձին խնդիրներին նվիրված Մ.Քոթանյանի,Վ.Խոջաբեկյանի, Հ.Սարգսյանի, Ա.Մարկոսյանի, Լ.Անանյանի, Մ.Մկրտչյանի, Գ.Ավագյանի, Մ.Գևորգյանի, Թ.Մանասերյանի, Ա.Մելքումյանի, Գ.Կիրակոսյանի, Ս.Դավոյանի և այլոց աշխատություններին[1], այնուամենայնիվ նշված բնագավառը հիմնականում շարունակում է մնալ գործնականում չուսումնասիրված: Հանրապետության սոցիալական ոլորտի առնչվող առանձին հարցեր արծարծված են Ն.Մարգարյանի, Մ.Գալստեյանի,Ս.Մելքումյանի, Հ.Խառատյանի հեղինակած աշխատությունները[2]: Հրապարակի վրա եղած Ա.Աղամբեկյանի կողմից խմբագրված «Տնտեսական վերափոխումներն անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ» ժողովածուն (Երևան, 1999), առավել արժեքավոր կոլեկտիվ ուսումնասիրությունն է, որը հրատարակվել է ՀՀ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ Կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի համատեղ ջանքերով: Ժողովածուն, որ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Ռուսաստանի Դաշնության գիտնականների ընդհանուր ուժերով մեծ տեղ է հատկացրել տնտեսական վերափոխումների առանձնահատկություններին և այդ գործընթացների արդյունքներին: Մեր կարծիքով, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հանրապետության Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից հրատարակված «Հայաստան 2002 զարգացման և անվտանգության ռազմավարություն», Երևան,2003 աշխատությունը, որտեղ փորձ է արվում ի մի բերելու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ տնտեսագիտական սկզբունքային մոտեցումները, որոնք կարող են դառնալ հանրապետության զարգացման ռազմավարության հիմքը: Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների հիմնահարցերին են նվիրված բազմաթիվ ռուս գիտնականների հեղինակած աշխատություններ[3]:

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության, հատկապես ներքաղաքական կյանքի հիմնախնդիրների քննարկումը հաջողությամբ է կատարված Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ե.Կոժոկինի խմբագրությամբ հրատարակված «Հայաստան. անկախության զարգացման հիմնախնդիրները» (Մ., 1998) աշխատության մեջ: Մեծ տեղ է տրվել Ռուսաստանի՝ Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ դիրքորոշմանը տնտեսական հիմնախնդիրների հետ կապված: Վ.Գրիգորյանի, Ս.Հովսեփյանի և Լ.Դռնոյանի քննադատական բնույթի աշխատությունները առավելապես հրապարակախոսական բնույթ ունեն: Ինչ վերաբերում է պետական բարձր պաշտոններ զբաղեցրած Վ.Մանուկյանի, Հ.Բագրատյանի, Վ.Մովսիսյանի աշխատություններին, ԳԱԱ նախագահ Ֆ.Սարգսյանի հուշերին, ապա դրանք արժեքավոր նյութ են պարունակում հարցիս քննարկման համար:

Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը այլևայլ հարցերի անդրադարձել են պ.գ.թ., պրոֆ. Գ.Մ.Գեղամյանը, պ.գ.թ. Ռ.Վ.Ազիզբեկյանը[4] և մենք[5]: Սակայն նրանց կողմից առավելապես քննության են առնվել հանրապետության առաջին տարիների որոշակի խնդիրներ, և սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հարցեր, ըստ էության, լուրջ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Այդ բացը փորձել ենք լրացնել մեր աշխատությամբ, որտեղ առաջին անգամ ներկայացրել ենք հանրապետության անցած ավելի քան տասը տարիների սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի վերափոխումների առավել ամբողջական պատմությունը: Հարցիս քննության համար արժեքավոր նյութ են պարունակում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության, Փիլիսոփայության և Իրավունքի ինստիտուտների, էկոնոմիկայի և Ֆինանսների նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի և ազգագրության ամբիոնների, Երևանի պետական

տնտեսագիտական ինստիտուտի և մի քանի այլ կազմակերպությունների անցկացրած սոցիոլոգիական հարցումները: Դրանց արդյունքները լույս են տեսել երկու տասնյակից ավելի ժողովածուների, գրքերի, գրքույկների և հոդվածների տեսքով[8]:

Հաշվի առնելով Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ողջ կարևորությունն ու ազգային, գիտական և քաղաքական նշանակությունը, կարծում ենք.

Առաջին. - Առաջիկայում այն պետք է իրականացնել կոմպլեքս եղանակով՝ ներգրավելով դրա մեջ ոչ միայն ՀՀ ԳԱԱ Պատմության, Արևելագիտության ինստիտուտները և ԵՊՀ Պատմության, միջազգային հարաբերությունների ու արևելագիտության ֆակուլտետները, այլև ԳԱԱ Տնտեսագիտության, Փիլիսոփայության և Իրավունքի ինստիտուտները:

Երկրորդ. - Ուսումնասիրությունները պետք է իրականացնել ոչ միայն զուտ քաղաքացիական պատմության քննության առումով, այլև տնտեսական, հասարակական զարգացման, աշխարհաքաղաքական զարգացումների, տարածաշրջանային գործընթացների և այլ հարցադրումների տեսանկյունից:

Երրորդ. - Ուսումնասիրությունների արդյունավետությունը էապես կարելի է բարձրացնել գիտական՝ համագործակցություն հաստատելով նշված հարցերով զբաղվող արտասահմանյան գիտնականների և մասնավորապես սփյուռքահայ պատմաբանների հետ:

Չորրորդ. - Հարկ ենք համարում ընդգծել, որ, հաշվի առնելով Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ուսումնասիրության կարևորությունն, անհրաժեշտ է ստեղծել համակարգիչ մի մարմին՝ ընդգրկելով նրա մեջ հիշյալ հարցերով զբաղվող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին, որը հնարավորություն կտա բանականորեն օգտագործել հանրապետության գիտական ներուժը:

Հինգերորդ. - Միաժամանակ, սոցիոլոգիական հարցումների օգնությամբ և անձնական դիտարկումներով կարելի է քննարկել ու վերլուծել հանրապետության կյանքի տարբեր ոլորտներում ընթացող գործընթացները:

Գրականություն

1 ***Քոթանյան Մ.,*** Շուկայական էկոնոմիկա, Եր., 1998թ., ***Խոջաբեկյան Վ,*** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դարերում, 21-րդ դարի շեմին, Եր., 2001: ***Խոջաբեկյան Վ,*** Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Եր., 1979, Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները, Եր., 1976: Խոջաբեկյան Վ., Աղետ և մտահոգություն, Եր. 1989թ., *Ходжабекян В., Вазе Ю., Р. Шефер, Демографические проблемы и воспроизводство трудовых ресурсов, Е. 1983,* ***Ходжабекян В., Асатрян Б.,*** *Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Е.*, 1990. ***Խոջաբեկյան Վ.,*** Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում,, Եր., 1998թ.: ***Խոջաբեկյան Վ.,*** Արցախը փորձության ժամին, Եր., 1991: ***Մարգարյան Հ.,*** Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, Եր., 2001: ***Մարկոսյան Ա.,*** Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը, տեսության և պրակտիկայի հարցեր, Եր., 1995: ***Մարկոսյան Ա.,*** Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին, Եր., 1995: ***Մարկոսյան Ա.,*** Պետությունը և շուկան, գ. 1-ին Եր., 2000: ***Մարկոսյան Ա.,*** Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., 2001: ***Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ.,*** Շուկայական տնտեսության հիմունքները, Եր., 2002: ***Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է.,*** Տնտեսության պետական կարգավորման միջոցներն ու ձևերը, *Аналитический журнал, "Рынок капитала в Армении",* ' 7,8 (65,66), Եր., 2001: ***Անանյան Լ.,*** Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Եր. 1982թ.: ***Անանյան Լ.,*** Տնտեսական պատմության ուրվագծեր, Եր. 2003: ***Կիրակոսյան Գ.,*** Անցումային տնտեսության վերափոխումները, տեսության հարցեր, Եր., 2002: ***Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ.,*** Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր. 2003: ***Ավագյան Հ.*** Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները, Եր. 2003թ.: ***Ավագյան Գ.,*** Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Եր., 1998: ***Մանասերյան Թ.,*** Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Եր., 2000: ***Մելքումյան Ս.,*** Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002:

2 ***Մարգարյան Ն.,*** Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Եր., 2001: ***Գաբրիելյան Մ.,*** Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001: ***Թադևոսյան Ա.,*** Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր , 2001: ***Մելքումյան Ս.,*** Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրներն աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունը, Եր., 2002: Արտագաղթը Հայաստանից (խմբ. ***Հ. Խառատյանի***, հեղինակային հրատարակություն), Եր., 2003:

3 *Курс переходной экономики (под редакцией академика Л.И. Абалкина), М., 1997.* ***Манов В.,*** *Реформы в постсоциалистическом обществе, М., 2000. Социальная политика: Учебник, (под общ. ред. Н.А. Болгина), М., 2002.* ***Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т.,*** *Аграрная реформа в странах с переходной экономикой, М., 2000. Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья, сборник статей 11, (под редакцией Е.М. Кожокина), М., 2001.* ***Иванов Э.М.,*** *Армения: особенности экономических отношений с Россией и перспективы их развития, М., 2001.* ***Ильин С., Бабанов А.,*** *Крестьянское (фермерское) хозяйство и рынок, М., 1995. Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975.* ***Казакевич В.,*** *Аграрный вопрос в Южной Корее, М., 1964. Реструктуризация промышленности в европейских странах с переходной экономикой (накопленный опыт и перспективы), М., 2002:*

4 ***Գեղամյան Գ., Ազիզբեկյան Ռ.,*** Հայաստանը 1945-1990-ական թթ., Եր. 1994: ***Ազիզբեկյան Ռ.,*** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Եր., 1992:

5 ***Մինասյան Է.,*** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան, 2003:

6 Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000: Պատմություններ աղքատության մասին, Եր., 2001: Արտագաղթը Հայաստանից, Եր., 2003: Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություններ 2000, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թ., Վիճակագրական վերլուծական ժողովածու, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002: Զեկույց իրական ակտիվներում իրականացված ներդրումների. ընտրանքային հետազոտություն, Եր., 2002: Հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածի զարգացման մասին, Վերջնական զեկույց (ամփոփագիր), Տոկիո, 1999: